ՀԱՂՈՐԴՈՒՄ

Մասիս քաղաքային համայնքի 2018 թվականի վարչական և ֆոնդային բյուջեներում փոփոխություն կատարելու մասին

Մասիս քաղաքի 5-րդ թաղամասում հողատերերի կողմից փաստացի օգտագործվող և կադաստրային քարտեզում նշված ծածկագրերի հողերի անհամապատասխանությունը ուսումնասիրելու, կարգավորելու համար անհրաժեշտ է ԱԳԿ-ից ստանալ տեղեկատվություն հողատերերի հողամասերի ծածկագրերի վերաբերյալ իրենց հատակագծերի լուսապատճեններով, որի համար անհրաժեշտ է ԱԳԿ-ին վճարել 171.4 հազար դրամ:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թ. Հուլիսի 23-ի թիվ 463-Ն հրամանի համայնքային ոչ առևտրային կազամակերպությունները 2018 թվականի հունվարի 1-ից պետք է անցում կատարեն հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգին, որը պետք է իրականացվի ՀԾ-Հաշվապահ 7 ծրագրով, ծրագրի արժեքը կազմում է 300.0հազար դրամ: Համայնքային ենթակայության թվով 12 ՀՈԱԿ-ների համար անհրաժեշտ է ֆոնդային բյուջեից հատկացնել 3600.0 հազար դրամ:

Աշխատակազմի քարտուղար Վ.Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն.Սահակյան